

Ոչ մէկ գիտակից հայու համար դադարեց է թէ Հայ ժողովուրդի ինքնութիւնն ու ճշմարտութիւնը իր Եկեղեցիին մէջ կը մնան բիրեղացած, այն Հաստատութիւնը՝ զոր մեր պապերը քար առ քար կառուցին յաւիտենականն ու անցաւորին ընդմէջէն։ Հայ Եկեղեցիին ինքնութիւնը կը կայանայ իր սեպհական ընտելեանը մէջ, մեր կրօնական նուիրապետութիւններն ու հաստատութիւնները յաճախ թիրացան զայն ճանշնալու պարտքին մէջ, որպէսզի լքուէր, քանգուէր այն նմանութիւնը որ իւրաքանչիւր Հայուն է իր Եկեղեցիով։

Եկեղեցւոյ ճշմարտութիւնն ու աւանդութիւնը, և մեր ապրած ժամանակը պարտէին հաշտեցուիլ իրարու, ընկու համար մեր կեանքը ամբողջ, չկաղալու համար չյերկուս հետոյ ժամանակի և ճշմարտութեան նկատմամբ։

Քրիստոնէութիւնը բոլոր ժամանակներու կրօնն է, և Եկեղեցին՝ անտեսը ճշմարտութեան և ժամանակի, բաւ է որ ան լրջամիտ կերպով կենայ ճշմարտութեան և ժամանակի նկատմամբ, տալու համար զգայասերն կայսեր և զկատուածոյն Աստուծոյն։

Կրօնական և ընկերային քարեկարգութիւնները տեսանդնորոն եւ հաւատքի մարդոց գործ են և ոչ թէ իմաստուններու եւ դժգոհներու։ Հայ Եկեղեցին արդարեւ միշտ պէտք ունեցած է բարեկարգութեան, մարդկային ընկերութիւնը, ինչպէս բոլոր կենդանի գործարանաւորութիւնները, շարունակ պէտք ունին սնանկու վերանորոգուած և հոգեկան սնունդով մը։ Կրօնական նիւթապալտութիւնը կամ անտարբերութիւնը, մեծ սկզբունքներու ծածկոյթին տակ դիմակաւորուած անբարոյականութիւնը, երջանիկներու և առանձնաշնորհնալներու ետաթիւրութիւնը, ամէն ժամանակի մէջ կ'երեւին եւ կան, խզի եւ հաւատքի մարդոց պարտքն է անդադար պայքարիլ նման շեղումներու և զեղծումներու դէմ։ Ատոր համար չի բաւեր ուսումնասիրել չարիքը, զայն նկարագրել, ողբալ, վասնզի ճշմարտութիւնները զիրենք ճանչցողներու նուիրումովն է որ կ'արժեւորուին և համոզումները այն ատեն միայն իրապէս զօրաւոր են և փրկարար, երբ գործի կը վերածուին։

(9)

Է. Վ. Տ.

ՓԱՄԱՆԱԿԻՆ ՀԵՏ

Երանի արց քաղան ամօրեմութիւն, եւ արց ծածկեցան մեղք իւրեանց։ ՇՈՒՍ. Դ. 7

Մեծ պահքը մեզի կը բանայ ժամանակաշղթան մը, ուր մենք կը ստիպուինք իրապէս անդրադառնալ մեր հոգեկան ու մարմնական ապրումներուն, որոնք առհասարակ կը մոռցուին, սովորական օրերու մեր զբաղումներուն և մտածումներուն մէջ։ Մեծ պահքը հետեւաբար ինքնաքննութեան և ինքնադատման շրջանն է։ Ինքզինքը զննել ուրիշ բան չէ բայց տեսնել իր մեղքը։ Անա թէ ինչու Մեծ պահքը տխուր նկարագիր մը ունի բոլոր անոնց համար՝ որոնք կրնան ու զիտեն ապրիլ Պահքը։ Ան ունի նոյնպէս ուրախ մտածում մը, երբ մենք պահ մը մոռցած մեր առօրեայ հոգերը ենթարկենք մենք զմեզ այն կանոններուն և խոհերուն որոնք Մեծ պահքին են յատուկ։ Վասնզի բոլոր իրական տխրութիւններ իրենց մէջ ունին գալիք ուրախութիւններու հաւաստիքը, աւելի ճիշդ ամէն իրաւ զգացում կեանքի մէջ հակակշռուած կը մնայ իրեն հակադիր բղղապնդումով մը։ Ներքին փոխադարձութեան այս զգացումին շնորհիւ է որ կեանքը կը ստանայ իր հոյովոյթը և կը մնայ տանելի։

Ով որ կ'անդրադառնայ ինքզինքին, կ'արժեւորէ իր անձը, և ով որ զիտէ արժեւորել ինքզինքը, զիտէ դնաւտել իր մեղքը։ Սակայն այս չի նշանակել թէ մենք միայն մեղաւոր ենք։ Մտածել այսպէս հաւասար է մտածելու թէ մենք մեղք չունինք։ Մարդիկ առհասարակ ճիշդ չեն մտածել իրենք իրենց մասին, և կը վախանան ներկայացնել իրենք զիրենք յայտնի բնոյթն ու ուրիշներու այնպէս ինչպէս որ չեն։ Մեծ պահքը խոնարհամտութեան, անդրադարձումի, հնազանդութեան և ապաշխարանքի շրջանն է, ուր մենք դէմ առ դէմ կուգանք ինքզինքնուս հետ, մեղքի և սրբութեան հետ։

Այսօր մեղք և սրբութիւն բառերը մեզի կը հնչեն խորթ և հնաբոյր։ Հատեր պիտի ուզէին որ ան փոխանակուէր արդիական և մեր մտքին ու արդի ապրումներուն ընտել

բառերով, և սակայն այս մտածումը ինքնին ժխտումն է մեղքին մեր օրերու մարդոց մտածումին և զգացումին մէջ: Մերժել մեղքը պիտի նշանակէր փոխադարձաբար չմտածել սրբութեան, անտարբեր կեանք սրբութեան, հաւասար է անասնութեան:

Մարդկային կեանքը ուրիշ բան չէ, բայց պատմութիւնը մեղքին: Անոր գիտակցիլը կեանքը յառաջդիմութեան ճամբուն առաջնորդել է:

Աստուած զրկած է զմեզ աշխարհ, և ընդարձակ հեռավորութեան մը վրայ, մեր առջև դրած է բարութեան, ճշմարտութեան և սրբութեան շնորհները, և ընդունակ ըրած մեր սիրտը ցանկանալու անոնց: Սակայն մենք իրապէս չենք ցանկար մինչեւ որ ուրիշ հակառակ մը կամ ձայն մը չմղէ զմեզ գէպի այդ պարզեւնեցող: Հոն է որ կը սկսի կեանքի փորձութիւնը օտ կը յստակուին մեղքին և սրբութեան կալուածները, և ապաշխարանքը կը հազնի իր իրական նշանակութիւնը:

Կեանքը փորձութեան և ապաշխարանքի դաշտ մըն է, անոնք միայն կրնան յաղթական դուրս գալ որոնք Աստուծոյ հոգիով հոն կ'առաջնորդուին: Յայնժանով վարեցաւ Յիսուս յանապատ ի Հոգւոյն փորձիլ ի սատանայէն: Հետեւաբար հոն ուր մենք կ'առաջնորդենք ինքզինքնիս առանց Անոր կամքին կամ Հոգիին, հոն մեզի կը սպասէ միայն պարտութիւն: Երկրորդ՝ ապաշխարել ուրիշ բան չէ բայց դէմ առ դէմ կենալ իր մեղքին, այսինքն խոստովանիլ զայն ինքզինքնին և Աստուծոյ: Ընդունիլ թէ ինքեզած է շատ անձնասէր, մտածելով միայն իր հաշւոյն և հետեւաբար մեղանշած: Ուրովհետեւ մեղքը կը սկսի հոն, երբ մենք կը մտածենք միայն մեզի համար, երբ կը զատենք զմեզ մարդոցմէ և Աստուծմէ, մտածելով թէ ամէն բան միայն մեր բաւքին համար է այս կեանքի մէջ, և հետեւաբար մենք կրնանք շարժիլ այնպէս ինչպէս որ մեր կամքը կ'ուզէ:

Անձնասէրը ոչ միայն կը խորէ, այլ չի լսեր և զգար իր շուրջի պաղատող ձայներն ու հազարաւոր կարիքները որոնք իր օժանդակութեանը պէտք ունին: Սիրած է ինքզինքը ու չէ մտածած իր ընկերին, և այսպէրպէս հակառակ է գործած Աստուծոյ պատուիրանին: Յետոյ կը զգայ մանաւանդ թէ

ինք մեղանշած է մանաւանդ Աստուծոյ դէմ, Հոն է որ կը սկսի կրօնական զգացումը, որ ապաշխարանքի հիմնական սկզբունքն է: Քեզ միայն մեղայ Տէր՝ կ'ըսէ ապաշխարող Դաւիթը, ու անմիջապէս կը ստանայ թողութիւն մարդարէին բերնով: Ինչպէս անձրեւի կաթիլը արեւին օտոծնալուն պէս կը ծնի ծիածանը, և կամ լեռան որ կ'արագանգէ որոտումը, այնպէս ալ իրական ապաշխարանքին կամ զղջումին կը յաջորդէ թողութիւնը:

Դիւրին չէ մարդուն համար սակայն դէմ առ դէմ կենալ իր մեղքին և խոստովանիլ զայն: Ուրբերու և մեծանձն անհատներու յատուկ է միայն այս արարքը: Մարդկային առաքելութիւններու ամենէն խօսուն և գեղեցիկը անկեղծութիւնն է, և բանալին իր ներքին մեծ զուգնորուն: Ոչ մէկ բան ճիշդ կը հնչէ մարդու մը կեանքին մէջ, որ ի բնէ անկեղծ չէ: Որովհետեւ ստախոսութիւնը և կեղծիքը մեղքերու աւանդէն սողոսկուններն են: Մենք ինքզինքնիս կը յայտնենք մեր նմաններուն, խօսքով, նայուածքով և շարժումներով: Ով որ կը ստէ կեղծ նշան մը կը պարզէ գիտակցօրէն: Սուտը, անկեղծութեան պակասը մեր մէջ կը խեղդեն առաքելութեանց ամէն կարեւորութիւն:

Մարդկային բնութիւնը ընդհանրապէս միտող է միշտ գէպի աշխարհայինը: Մեզմէ ոմանք հակամէտ են վայելքին, ուրիշներ դրամին, օմանք կ'որոնեն փառք և պատիւ: Ու եթէ թոյլ տանք որ այս զգացումները տիրապետող դառնան մեր մէջ, մենք տակաւ կրնանք հեռանալ Աստուծմէ:

Միւս կողմէն պէտք է գիտնալ թէ մարդը բոլորովին անզօր չէ մեղքի և վատ հակումներու դէմ: Մեր մէջ կայ նոյնպէս հակադիր ուրիշ զօրութիւն մը, բարիին ուժը և խղճին ձայնը, որ կը զօրացնէ զմեզ առաջնորդելով զմեզ դէպի բարին և կատարեալը:

Գիտենք թէ անվերջ կիւր մըն է մարդկային կեանքը, նիւթին և խորհուրդին միջև, երկրաբար կիրքերու և բարձրագոյն խառնալին միջև: Եւ սակայն իրողութիւնը պակերպ ըլլալով հանդերձ մարդը չի կրնար հրաժարիլ ոչ մեղքէն և ոչ ալ Աստուծմէ: Բայց բարիին տենչը կը ֆնայ ի վերջոյ տիրական գիծը մարդուն հոգիին:

Պահքը եթէ կրօնաբարոյական պարտադրանք մը, արարմունք մըն է իր արտաքին ձեւին մէջ, խորքով անիկա պատճառներինն է Աստուծոյ՝ և ասով միայն կը դառնայ կրօնական միջոց, հոգեկան փրկութեան առիթ։ Այսօր պահքը չի պահուիր իր վայել և ամբողջական լըղութեամբ, վասնզի մեզի տակաւ կը պակսի զոհողութեանց այն կշիռը՝ որ մեզմէ կը պահանջուի։ Առասպելները չեն կեանքն ու կենցաղը առաքելներինն։ Բանդագողւանքները չեն ճգունքը սակաւապետներուն, որոնք ջանացեր են հոգիին իրաւունքները փայլեցնել։

Պահքերը, ըսուած է, վճիտ մտքին և սուրբ սրտին պահպաններն են։ Մեծ պահքին մենք պարտինք հեռանալ առօրեայ հոգերէն եւ մտածումներէն՝ ինքզինքնիս կարենալ տեսնելու համար։ Մեծ պահքը, ինչպէս բոլոր պահեցողութիւնները առհասարակ՝ գիտութեամբ, փորձութեամբ եւ հաւատքով կարգադրուած չափաւորումներն են մարմնի աւելորդ և փաստաբեր ցանկութիւններուն։ Այդ սանձումները կը պաշտպանեն հոգիին իրաւունքները և կը զօրացնեն դայն, որովհետեւ ոգի առաւել է քան զկեցակուր։

Մեծ պահքի այս օրերուն, պէտք է մեր մտածումին առարկան ըլլայ մեր բարձրագոյն ճակատագրին հոգը։ Մեծ պահքը զժբախտաբար դադրած է այլեւս ազնուացի չըլլալ մը ըլլալէ, սակայն անիկա անհրաժեշտաբար պարտի ըլլալ առօրեային մէջ մեզմէ խուսափած մեր բարձրագոյն էութեան, մեր ապագայ կեանքին հայեցողութեան շրջանը, ժամանակամիջոցը՝ ուր մենք կը վերադառննք մեր միւս մասը եւ, ամբողջացնելու համար կեանքը։ Մեծ պահքը այս մտածումով վերապրումին շրջանն է, սարսափն այն անկիւնագործը՝ ուր մեր մէջ պէտք է հաշտուի հոգեկանն ու մարմնականը, շինելու, համար կատարեալ մարդը։

Ե. Վ. Տ.



ԽՕՍԲԵՐ ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ձէ ծնած երբեք մարդ մը երկրի վրայ որ փնտռած չըլլայ երջանկութիւնը. բոլոր մարդիկ անխտիր, ըլլան անոնք հարուստ կամ աղքատ, տղէտ կամ գիտուն, քաղաքակրթուած կամ բարբարոս կը ձգտին երջանկութեան։ Երջանկութեան տեսլը հասարակաց է։

Մարդիկ կարենան թերեւս նուիրական կամ տխուր պատեհութեամբ մը հրաժարիլ ապրել, քայց կարելի չէ ապրիլ, առանց փնտռելու երջանկութիւնը, վասնզի մարգարէի ըստեալ եւ հոգեպէս շինուած է երջանիկ ըլլալու համար։ Ինչպէս թիթեռը լոյսին կը վազէ, վասնզի անոր կարօտը ունի, շատ անգամ անոր բոցին մէջ այրելով ինքզինքը, այնպէս ալ մարդը երջանկութեան կ'երթայ՝ անոր մէջ ամոքելու իր հոգեկան ու ֆիզիքական տենչերուն ծարաւը։

Թէ՛ն երջանիկ ըլլալու տեսլը հասարակաց է, սակայն անոր գոհացում տալու կերպերը կը տարբերին անհատէ անհատ, համաձայն իրենց միջավայրին, զատարանակութեան և դիրքին, ակն հոս է որ կը դժուարանայ երջանկութեան սահման մը տալու պարագան, և հոս է որ կը սկսի ողբերգութիւնը։

Եթէ մեզմէ իւրաքանչիւրիս, օրինակ հարցուի այժմ թէ ի՞նչ է երջանկութիւնը, և որոնք են անոր հասնելու միջոցները, վստահ եմ թէ իւրաքանչիւրս իր չռնեցածին մէջ պիտի փնտռէ զայն. աղքատը գըրամին, հարուստը՝ փառքին, երիտասարդը՝ հաճոյքին և ծերը երիտասարդութեան մէջ, առանց անդադրաւանալու թէ շատ անգամ յիշեալ բոլոր պայմաններովն իսկ չի գնուիր երջանկութիւնը։

Ըսելէ առաջ սակայն թէ ի՞նչ է իրական նկարագիրը երջանկութեան, անհրաժեշտ է հակիրճ կերպով ներկայացնել նախ իր պատմութիւնը, այսինքն ըսել թէ անցնող սերունդները ինչպէ՞ս ըմբռնած են զայն, և ի՞նչ միջոցներ կիրարկած են անոր տիրանալու համար։

Նախամարդէն սկսեալ, մինչև արդի քաղաքակիրթ մարդը, ինչպէս ըսինք՝ տրոնած են երջանկութիւնը. մարդը երբեք